ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

№ 83.—ՀՈՒՆԻՍ ԿԱՄ ՀՈՒԼԻՍ ՏԱՐԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ

ՊՎՈՒՆՉՎՈՂ ԴԱՐԸ

(Ֆրանսիայի «Պետական հոսանք» ամսագրի խմբագրության հարցազրույցը)

27 մարտի

Ֆրանսիայի ներկայիս տնտեսական դրության մասին մեր հարցազրույցը ֆրանսիական խոշոր արդյունաբերական ձեռնարկություններից մեկի տնօրենի հետ է։

— Ֆրանսիայի տնտեսական կյանքի ներկայիս վիճակը,— ասում է նա,— ամենից առաջ պայմանավորված է ֆրանկի արագ անկմամբ։ Ֆրանկի անկումը ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայում ստիպում է մեզ ամեն օր ու ժամ վերանայել մեր ապրանքների գները

բացառութեամբ: Գլխաւորապէս այդ մենք վերաբերում ենք տգէտ և անարժան քահանաների արարողութիւններին, որպիսի քահանաներով է կառավարվում Դարալագեազը:

Դարալագեազից սրբազանը գնալու է Նախիջևան, որտեղ հոգևոր կառավարութեան գործերին վերահասութիւն անելուց յետ կ'անցնի վիճակը ման գալով մինչի Տաթևի վանքը և այնտեղից կը վերադառնայ Երևան սեպտեմբերի վերջերին:

Գիւղացոց գարնան յոյսը հացաբոյսի վերաբերութեամբ չ'արդարացաւ, անձրևային մայիսից յետ, բացի Դարալագեազի վերևի մի քանի գիւղերից, միւս կողմերում ամենևին անձրև չէ եկել, ուստի ցանքերը չքաւսուած են. Դեմի (որ միայն անձրևով է ջրվում) արտերը, խաչիկու շրջակայքում կիսով չափ չորացել են:

Ռ.

ԲԱԳՈՒ

28 յուլիսի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Յ. խմբ.: «Մեղուի» 74 №-ում Շամախուց հաղորդած էր մի լուր, որ իբր պ. Գ. Քալանթարեանը խոստացած լինելով իւր տունը Շամախու օրիորդական ուսումնարանին, այժմ մերժում է իւր խոստումը կատարելուց իբր իւր ազգական գործակատարի Յ. Սարգսեանի չնորհով:

Ճշմարտութիւնը ստիպում է խոստովանել, որ պ. Քալանթարեանը իսկապէս խոստացել է ձրիաբար տալ իւր տունը ուսումնարանին, բայց թէ այժմ նա հետանում է իւր խոստումը կատարելուց — այդ միանգամայն սխալ է և անհիմն: Որքան ինձ յատնի է ամենահաստատ աղբիւրներից պ. Ք-ի խոստումը չը կատարելու իսկական պատճառը ոչ ինքն է և ոչ էլ նրա գործակատարը, այլ նոյն իսկ ուսումնարանի ընդհանուր հոգաբարձութիւնը և ուսումնարանի վարչութիւնը, և ահա ինչպէս: Պ. Քալանթարեանը իւր տունը, որ տարեկան այժմ 250 ռ. եկամուտ է տալիս, առաջարկած է եղել տասը տարի ժամանակով ուսումնարանին, բայց հոգաբարձութիւնը և ուսումնարանի վարչութիւնը այնքան խելօք են գըտնուել, որ փոխանակ այդ նուէրով օգտվելու, առաջարկել են պ. Քալին, որ սա իւր առաջարկած նուէրի փոխարէն ուսումնարանին պարտաւորվի տալ այդ տան տասը տարուայ վարձը կանխիկ փողերով, այն է 2,500 ռ.: Պ. Քալանթարեանը իհարկէ մերժել է այդ առաջարկութիւնը այն հիման վերայ, որ նուէրը երբէք սակաւպատկան չի կարող լինել և ինքը կամենում է տունը տալ ուսումնարանին և ոչ թէ փող: Իսկ նրա ազգական գործակատար Յ. Սարգսեանը, հակառակ լրատուի տեղեկութեան, քանից անգամ ինքն է խնդրել հոգաբարձութեան, որ տունը վերջապէս ընդունի պ. Քալանթարեանից, իսկ հոգաբարձութիւնը մինչև այսօր էլ չի կամենում այդ անել պահանջելով որ Ք-ը անպատճառ փողեր նուիրի տան փոխարէն: կարծես թէ մենք ապրում ենք միջնադարեան եզուիտների օրերում, որ նուիրատուութիւնների փոխարէն ուսումնարանին պարտաւորվի տալ իրաւունքներին ենթարկուած լինին: Ինչ լաւ, որ հոգաբարձութիւնը չի պահանջում պ. Քալանթարեանից, որ սա պարտաւորվի պ. պ. հոգաբարձուներին էլ իւր հաշուով կերակրել և հագցնել, այն ժամանակ իսկապէս նա աւելի էլ խոհեմ կը լինէր այդ տեսակ անմեղ պահանջով:

Ճշմարտութիւնը պարզելու համար խնդրեմ այդ երկտողիս տեղ տալ ձեր պատուական լրագրում և յայտնել, որ պ. Քալանթարեանը այժմ էլ պատրաստ է նուիրել իւր տունը միայն թէ հոգաբարձութիւնը թոյլ չը տայ:

Մ. Ա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական զօրքերը իրանց դիրքերը ամրացնում են Ռամլէի մէջ. միևնոյն ժամանակ ինժէնէրները Մահմուդիէ ջրանցքի քանդած կամուրջը նորից չինում են, Սուէզի անգլիական զօրքը զօրացրած է մի գունդ զօրքով:

— Յուլիսի 27-ին (8 օգոստ.) Սուէզի ծոցը կրէտէ կղզու վերայ դուրս եկաւ երեք-հազար հոգուց բաղկացած թրքական զօրքը: Խէդիվը եգիպտական ազգին ուղղած հրովարտակի մէջ յունիսի 11-ին Ալէքսանդրիայի կոտորածը Արաբի-փաշայի խարդախութեանց է վերագրում և յայտնում է, որ Ալէքսանդրիայի ռմբակոծումը Արաբի-փաշայի սուլթանի հրահանգներին չը հպատակելու հետևանք է: Այս բոլորի պատճառով խէդիվը Արաբի-փաշային ապստամբ է հրատարակում:

— Ալէքսանդրիայից յուլիսի 27-ից (8 օգոստ.) հեռագրում են, որ «Temeraire» զինուորական նաւը Ռամլէի ամրութեան առաջ կանգնելով գնացակոծ է անում եգիպտական առաջապահ զինուորներին, որոնք վերջին օրերում աշխատում էին առաջ գալ:

Քաղաքին մաքուր ջուր մատակարարելուն դիտող յանձնաժողովը յայտնում է, որ հետևեալ երկուշաբթուանից քնակիչներին ամեն օր ջուր կը տրվի միայն չորս ժամուայ ընթացքում, այն էլ ոչ աւելի քան 20 լիտր մարդագլուխ:

— «Norddeutsche Zeitung» թերթը հերքում է «Morning Post» թերթի այն հաղորդութիւնը, իբր թէ բոլոր պետութիւնները բացառութեամբ Անգլիայի, հակում են Սուէզի-ջրանցքի նաւագնացութիւնը ենթարկել այն կարգի խառն յանձնաժողովի հովանաւորութեան, որպիսին կայ Դանուբի նաւագնացութեան համար: Ջրանցքով անցնող նաւերի 75-ից մինչև 80 տոկոսը պատկանում է Անգլիային, սրա համար էլ անհատաստակի է, որ պետութիւնները աչքի առաջ ունենային Մեծ-Բրիտանիայի տիրապետող չահերը ստորագրել ոչ-անգլիական մեծամասնութեան որոշմունքներին, «Morning Post»-ը, աւելացնում է գերմանական լրագիրը, ինչպէս երևում է նպատակ ունի ընդհերցողներին վախեցնել ցամաքային պետութիւնների ծրագիրներով, կօնֆէրէնցիայում խօսվում է ջրանցքի պահպանութեան ժամանակաւոր միջոցների մասին, և ոչ թէ դէպի նա մշտական յարաբերութիւններ կանոնաւորելու, որ անկարելի է առանց զանազանութեանց մէջ փոփոխութիւններ մտցնելու, փոփոխութիւններ, որոնք ծնունդ են առնում այն վճիռներից, որոնք թոյլ են տրված կօնֆէրէնցիային:

— Իշլից յուլիսի 28-ից (9 օգոստ.) հեռագրում են, որ կէսօրին արտաքոյ կարգի գնացքով այնտեղ հասան երկու կայսրները:

Եիսավէտա կայսերուհին նրանց կայարանում հանդիպեցաւ: Ինչպէս որ առաջին տեսակցութեան ժամանակը Աուստրիում, նոյնպէս և այս անգամ Իշլում կայսրների տեսակցութիւնը չատ բարեկամական էր: Աւստրիական կայսերական խումբը վիլլէվիլ կայսրին մինչև «Elisabeth» հիւրանոցն ուղեկցեց: Չաւաքուած խուռն բազմութիւնը սիրալիր կերպով ողջունեց երկու կայսրներին:

— Յուլիսի 28-ից (9 օգոստ.) Պէնզէնից Լօնդոնում լուր է ստացուած, որ հիւսիսա-գերմանական Լլօյդի «Mosel» փոստային չոգենաւը, որը Սօուտհամպտոնից Նիւ-Եօրկ էր գնում, ալէկածութեան հանդիպեցաւ Լիզարդա ծոցը մօտ: Ձանապարհորդները պէնզէնում ափը դուրս եկան:

— Ֆրանսիական պատգամաւորների ժողովում նոր պաշտօնէութիւնը իւր ծրագրի մասին յայտնեց մօտաւորապէս հետևեալ խօսքերով.

«Նոր կազմուած պաշտօնէութիւնս հետանք է յուլիսի 29-ի ձայնատուութեան, սրա համար և նրա առաջին պարտականութիւնն է — պատգամաւորների ժողովին յայտնել, թէ ինչ նշանակութիւն է նա տալիս այս ձայնատուութեան, որպիսի վարմունք նրա կարծիքով, յայտնում է կառավարութեան պատգամաւորների ժողովի մերժումը Սուէզի-ջրանցքի պահպանութեան միջամտութեան վարկի համար: Պատգամաւորների ժողովը, ինչպէս երևում է, ցանկանում է չափաւորութիւն, զգուշութիւն միջամտութեան խնդրի վճռումում, բայց չի հրաժարվում նրանից: կառավարութիւնը այս հայեացքը կ'րդունէ իբրև ուղեցոյց իւր վարմանց մէջ, կը յարմարվի նրանց, և եթէ յառաջ կը գան այնպիսի հանգամանքներ, որոնք Ֆրանսիայի պատիւը կամ չահը կը չօշափեն, այն ժամանակ նա կ'չտապի պատգամաւորների ժողովը գումարելու և նրա քննութեան ենթարկելու հանգամանքների համեմատ միջոցները: Ներքին խնդիրները պահանջում են լուրջ աւելի ուշադրութիւն, բայց նրանց աւելի կարևի է յետաձգել. գոնէ մի այնպիսի բան չը կայ, որ խիստ պահանջ լինէր նրա վճռումն նիստերի առաջիկայ դադարման ժամանակը: Մենք օգուտ կը քաղենք այս ազատ ժամանակից այս ներքին խնդիրներով զբաղվելու համար ազատութեան և յառաջադիմութեան ոգով. Մենք մեզ նպատակ ենք դնում նոյնպէս հանրապետական մեծամասնութեան զանազան բաժանումների հաշտութեան հոգը, և եթէ ձեր օգնութեամբ մեզ կը յաջողի այս գործնական նպատակին հասնել, այն ժամանակ մենք կը կատարենք այն գործը, որը ներկայ հանգամանքներում շատ նշանաւոր է թէ պատգամաւորների ժողովի և թէ հանրապետութեան համար»:

— Լօնդոնից օգոստոսի 2-ից հեռագրում են, որ եգիպտացի ապստամբները մեծ թիւով սպառնում են Սուէզի-ջրանցքին: Մահմէդականների զրզըռմունքը Սիրիայում աճում է. երկիւղ կայ քրիստոնեաների ընդհանուր կոտորածի:

Անգլիայի համաձայնութիւնը Թիւրքիայի հետ կը կայանայ չուտով:

— Ալէքսանդրիայից նոյն թուով հեռագրում են, որ անգլիական առաջապահ զօրքերը առաջ են գնացած երկաթուղու կայարանի մօտ. նրանք դիմադրութիւն չեն կրել:

ՓԱՂԱՆԴ

Ֆրանսիայի ներկայ նախարարութիւնը, որ կազմուած է Ֆրէյսինէի գլխաւորութեամբ, ինչպէս երևում է, ամենևին չի կարողանում հանգիստ նստել իւր տեղում: Ամեն օր նրա դէմ նոր նոր հարձակումներ են լինում, որոնք ստիպում են նրան ամեն կողմից պաշտպանել իւր գոյութիւնը: Ամենից առաջ նրա դէմ ելաւ Ռուհէր, որ ուզում էր նրան ստիպել, որ նա հրաժարվի Ֆրանսիայի ներկայ կառավարական ձևից և ընդունի միապետական ձև: Ռուհէրի ձգտումները ոչ միայն չյաջողվեցան, այլ նրա ընդդիմադիր կուսակցութիւնը ինքն էլ ներքին կռիւների մէջ ընկաւ: Ռուհէրի կուսակցութիւնը ներկայ նախարարութեան դէմ ելաւ այն պատճառով, որ նա ոչ միայն չի ուզում ոչնչացնել հանրապետական ձևը, այլ ընդհակառակն ամեն կերպով ամրացնում է նրան

տում են Արաբի-փաչայի ֆաֆր-Դօվա-րում բռնած դիրքերը։

— Վիէննայից հաղորդում են, որ ներկայ ամսի վերջին կը հրատարակվին հետևակ զօրքի նոր կազմակերպութեան մասին կայսերական հրամանները. Ներանց կատարելը անհրաժեշտ է վերջացնել մինչև հոկտեմբերի 1 ը. Նոր զօրքեր հաւաքելու պատճառով Ընդհանրաթաֆիզ գնդի կազմակերպելը աւելի ուշ կը կատարվի։

— Կ. Պօլսից հաղորդում են, որ Թիւրքը պաշտօնեաների խորհուրդը ընդունած է այն պայմանների քննադատութեամբ, որոնցով Թիւրքիան կարող է Անգլիայի հետ միասին մէջտեղները ձեռնարկել Եգիպտոսում։ Պաշտօնական «Fremdenblat» թերթը կարծում է, որ Անգլիան և Թիւրքիան իւրաքանչիւրը առանձին կը գործեն, իսկ մրասին գործելու դէպքին նրանք համաձայնութեան մէջ կը մտնեն։

— Ալէքսանդրիայից օգոստոսի 2(14)-ից հեռագրում են, որ ծովակալ Սէյմուրը ռմբակոծեց «Մէքսս» ամրութիւնը։ Երեքշաբթի Ալէքսանդրիա կը հասնի գլխաւոր Ուէլսլէյին, որն արդէն դուրս է եկած Մալտայից։

— Փարիզից հեռագրում են, որ Արաբի-փաչայի գործողութեանց դադարեցնելու պատճառով եգիպտական և Թրքական Թուղթ փողերի գները այնտեղ բօրսայում բարձրացել են։

— Ալէքսանդրիայից հաղորդում են, որ այնտեղ հասել են անգլիական երկու զօրաբաժիններ։

— Ալէքսանդրիայից օգոստոսի 2(14)-ից հաղորդում են, որ անգլիական զօրքը, որը զբաղուած էր «Մէքսս» ամրութեան առաջ գտնուած պատերազմական զէնքերի ոչնչացնելովը, յարձակման ենթարկուեցաւ Թշնամու կողմից և ստիպուած էր կորուստով յետ քաշվիլ։

— Հեռագիրը հաղորդում է, որ Արաբի-փաչայի զօրքերը գրաւել են Իսմայիլը, Ալէքսանդրիային չրջապատել են, պատերազմի են սպասում։ Արաբին Լէսեպսին պահպանութեան գումը է տուել։

— Բէյրութում խաղաղութիւնը վերանգնած է։ Դօրֆուրի եկարդօֆանի փոխարքանները իրենց խելքով են հրատարակել, Արարի-փաչան սպառնում է Սուէզի-ջրանցքին։

— «Առաւաւարչական համրաւաբերը» հերքում է այն լուրը, որ իբրև թէ Ռուսիան Թողել է Թիւրքիային այս վերջինից 1882-ին ստանալիք պատերազմական ծախքը։ Պատերազմական պարտքի հատուցման պայմանագրութիւնը գործադրուելու է 1883-ից։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«Մեղուի» անցեալ 82 համարում, ազգային մասում, Հաւլաբարի օրիորդական դպրոցի մասին «Լուռ լեր» վերնագրով յօդուածի տակ զրաչարների անզգուշութեամբ դուրս էր ընկել սոսկալի սխալ։ Որովհետև խմբագրութիւնը այդ յօդուածի վերջին մասը ամբողջապէս չընդունել էր, զրաչարները սխալմամբ չնչած են համարել և տպագրութիւնը։ Տպագրութիւնը այսպէս է՝ Ղ. Ֆ. Ց.։

***

Տպելով Ղ. Ֆ. Ց.-ի յօդուածը «Հաւլաբարի օրիորդական դպրոցի մասին, կարծում ենք, որ «Արձագանքի» խմբագրութիւնը կը տեսնէ, որ մենք օգից չենք առնում լուրերը և չատ զգուշութեամբ ենք տպում մեզ հաղորդած տեղեկութիւնները։ Եւ եթէ լրատուներից մէկը իզուր գործ դնէ խմբագրութեան հաւատարմութիւնը, լրագիրը միշտ իր արժանիքը ճանաչելով սակայն յօժարութեամբ կը տպէ և հաստատ փաստերի վերայ հիմնած հերքումը՝ թող հերքեն հաղորդած լուրերը, բայց ոչ թէ հայհոյեն, զրպարտեն, եթէ կամենում են, որ հասարակութիւնը հաւատ ընծայէ իրենց տուած պատասխաններին։

***

ՂԱԶԱԽԻՑ մեզ գրում են.—Այս տարի Ղազախի գաւառը բաժանուել է երկու անտառապետութեան։ Տացէ Աստուած, որ իւրաքանչիւրը գործ ունենալով անտառների փոքր տարածութեան հետ, կարողանայ անտառների գոյութիւնն ապահովել։

***

ՂԱԶԱԽԻՑ մեզ գրում են.—Այս տարեշէն գարնանը այստեղ մի տեսակ բըզդուռոյց է յայտնվում, որը սարսափ է տարածում ամենքի վերայ. դա այնպիսի բնաւորութիւն է ունենում, որ ով ընկնում է, այլևս ապրել չի կարողանում, գոհ է գնում։

***

ՓԱՐԻԶԻՑ պ. Տ. Ս. խնդրում է մեզ յայտնել, որ նրա մինչև այժմ տպագրուած յօդուածների մէջ բացի անուշադրութեամբ բաց Թողուած տողերից և սխալներից, սպրդել են նաև այսպիսի վրիպակներ. հասարակութեան—պէտք է լինի հասարակապետութեան, անեղանելի—անելանելի, ռօման—դրամատ, դատմանական—դամբանական, մարդիկ—մարմիկ, մարդիկը—մարմիկք և այլն։

***

«Մեղուի» թղթակիցը Շամախուց հաղորդել էր, որ այդ քաղաքում Թուղթ խաղալու սիրտը աճում է։ Այդ լուրի դէմ Շամախու գաւառապետը աչքատում է ուսս «կովկաս» թերթում հերքել այդ լուրը։ Նա գրում է յիշեալ թերթում.—«Այդ հաղորդութիւնը չափից դուրս հեռու է ճշմարտութիւնից, որովհետև Շամախի գրեթէ Թղթախաղ չը կայ (??), ըստորում դէպք չէ պատահել, որ հինգ փոքրիկ սենեակից աւելի բացուած լինի, և դրանք էլ պրէֆերանսի համար $^1/_4$ և $^1/_2$ կօպ. ոչ աւելի մի քանի կանանց մասնակցութեամբ։ Այս բանի մէջ ես (գաւառապետը) իբրև ոչ խաղացող (?) դրանականապէս համոզուեցայ 4 ամսուայ ընթացքում, իսկ այդ բանին աւելի լաւ ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ ապագայ ժողովարանը (կլուբ) Թըղթի եկամուտը Թողնում է բուֆէտի տիրոջ տարեկան նրա պահանջած 400 ռ. օ. ժանդակութեան փոխարէնում։

Այնուամենայնիւ մենք ամենևին իրաւունք չ'ունինք մեր Թղթակցի տուած լուրը անհիմն համարելու։ Սպասելով Թղթակցից այդ մասին բացատրութիւն, մենք այժմ իսկ կը բռնենք իրեն գաւառապետին իւր խօսքերից։ Ինչ է պատճառը, որ նա այդպէս չուտ հարկաւոր է համարում յայտնելու, որ ինքը Թուղթ խաղացող չէ, այն ինչ Թիֆլիսում ճանաչում են նրան իբրև Թուղթ խաղացող։ Որտեղից պէտք է իմանայ գաւառապետը թէ Շամախու տներում ինչ է պատահում և որքան են Թուղթ խաղում, որ այդպէս դրականապէս գրում է թէ «Շամախի զբօսնելէ Թղթախաղ չը կայ», այն ինչ մենք գիտենք, որ քաղաքային այդիի ռօտօնդում բաւականին տեղ չը մնալով Թուղթ խաղացողների համար՝ շատերը գնում են մասնաւոր տներ խաղալու Թղթախաղից չը զրկուելու համար, թէ որքան Թղթախաղը աճել է Շամախում, երևում է հէնց պ. գաւառապետի խօսքերից։ Եթէ ժողովարանի փոքրիկ հասարակութիւնից նոյն ժողովարանի բուֆէտիչին 400 ռ. տարեկան օժանդակութեան փոխարէն չատանում է Թղթի եկամուտից, նշանակում է, որ Թղթից չատ եկամուտ կայ, նրա օգտը պէտք է որ 400 ռ. աւելի լինի և ամեն կերպ պէտք է ջանք դնուի, որ մեծ եկամուտների համար չատ Թուղթ բացուի։ Սրգեօք առանց այն էլ քանդուած Շամախու համար այդ էլ մի նոր ցաւ չէ։

***

ԻԳԴԻՐԻՑ օր. Սաթինիկ Պահլաւունին գրում է մեզ.—կարդալով «Մշակ» և «Մեղուս» լրագրներում Իգդիրից հաղորդած լուրերը, երկսեռ դպրոցների և զլխաւորապէս ուսուցչուհիների վերաբերեալ, որը մեծ յուզմունք է պատճառում մի քանի հասկացող անձանց, ես իբրև այցելու զպրոցի, նրա ուսուցչուհիների ամեն մի քայլը նկատողութեան առնելով կարող եմ ասել, որ երկու քոյրերը ոչ մի ջանք չը խնայեցին օրիորդաց դպրոցի յառաջադիմութեան համար, զրանք իրենց գիտցածը գործ դրեցին։ Դառնում եմ ուսուցչուհիներին խնդրելով, որ գործեն ուրախ սրտով, անուշիները չեն մոռանալ զբօսանց աշխատութիւնը։ Յարգոյ խմբագիր, խնդրում եմ ձեր ազգօգուտ լրագրում մի անկիւն չնորհէք այս երկտող գրութեանը ի մխամտութիւն հասարակութեանը, որ պ. լրատուների չնորհիւ մեծ յուզման մէջ է։

***

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են.—23-ին յուլիսի մի բէկլերովարի յատակը փորձելու համար, թէ արդեօք կաթիւմ է թէ ոչ, պէտք է բանւորները մտնէին տակը. բէզերվուարը կանգնած էր արչին ու կէս երկարութեամբ կոճղների վրայ, աւազը փափուկ լինելով կոճղները ծռվում են և 8 բանւոր կաթսայագործներին տակում Թողնում, որոնցից 4-ին արդէն մեռած են գտնում (ռուս), իսկ 4-ին վիրաւորված (2 ռուս, 2 հայ)։ Անցքը պատահում է սև քաղաքում ուր տարեկան 20—30 զոհեր են լինում թէ այրվող, թէ չախչախվող։ Մի այլը չախչախվել է Նօբէլի գործարանում վտանգաւոր կերպով. այդ գործարանի հետ ամրողջ Բագուի գործարանները չեն կարողանում մրցել—մարդիկ կորցնելում։

***

Մենք չարունակում ենք բանասիրական մասում տպել պ. Ց. Տէր-Մովսէսեանցի պատասխանը գալթականութեան վերաբերեալ մեր առաջնորդողների դէմ, թէպէտև մենք այդ պատասխանը իր գլխաւոր կէտերում անհիմն ենք գտնում, թէպէտև լրագրի առաջնորդողների դէմ պօլէմիկայի տեղ տալը նոյն թերթում անյարմար է։ Թող ընթերցողը կարդայ պատասխանը, մենք իր ժամանակին կը վերադառնանք այդ խնդրին։

***

Մեղ հակառակ մամուլը չարունակում է իր յամառութիւնը, ինչոր իրեն համար նոր է, կարծում է որ մեզ համար էլ նոր պէտք է լինի։ Մենք իրեն թէ իրեն չնորհքովն ենք սկսել հասկանալ, որ լուսաւորչական հայն էլ պատահում է, որ խորչում է իր մայրենի լեզուից։ Կարծես թէ չը գիտենք, որ այդ զօռով ազատամիտներից մէկին էլ լուսաւորչական վինելով ատում էր հայերէնը մի անգամ։ Տիրացու-ազատամիտներին զուցէ «համազգային» բառով չլացնել կարելի լինի, բայց թէ մեզ հակառակ մամուլը համազգային թերթ է, այդ կը տեսնենք, և այդտեղ չի կարող մի երիտասարդ պ. Մեղաւորեանի արածը վճռական նշանակութիւն ունենալ, քանի որ այդ երիտասարդ ուսուցիչը դեռ ինքը պէտք ունի մի քիչնակարդ դպրոց մտնելու ուսմունք ստանալու համար։ Ուրեմն բայի մեզ հակառակ մամուլից դեռ ոչ ոք չի հասկացել, թէ մի ուսումնարանում կարող են ուսանել լուսաւորչական հայերի հետ և այլազան հայերը։ Apropos, հապա ինչպէս այդ հասկացել է պ. Մեղաւորեանը, որը աշակերտել է Ներսիսեան դպրոցի «յետադէմ», «խաւարամիտ» ուսուցիչների մօտ։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սպասող մը կըսէր օր մը քարոզչի մը.

— Վարդապետ, անցեալ կիրակի քարոզեցիք թէ բոլոր բարի բաները Աստուած ստեղծած է, ուրեմն նայեցէք իմ կազմութիւնս։

Քարոզիչը լաւ մը դննելով զայն՝ կըսէ.

— Սիրելի զաւակս, ձեզի բան մը չպակսիր. կապահովցնեմ քեզ թէ սպասպողի մը բոլոր յատկութիւնները ունիս։

***

Ոմն տղու մը հարցուցին թէ առտուները ինչու այնչափ ուշ կ'ելնէ անկողնէն։

— Պատճառը այն է որ, պատասխանեց տղան, ամեն առտու խորհուրդ ունիմ, աշխատասիրութիւնը խորհուրդ կուտայ որ ելնեմ, նոյն միջոցին ծուլութիւնը վրայ կուգայ և կը յորդորէ ինձ որ պառկած կենամ, երկուքն ալ բաղում փաստեր յառաջ կը բերեն իրենց առաջարկածին իրաւացի և օգտակար ըլլալը հաստատելու համար. հարկաւ երկու կողմանն ունկնդրութիւն ընող ես պիտի ըլլամ, հազիւ թէ դատաստանը կը կարեմ կը լմնցնեմ՝ նայես որ ցերեկուան ճաշը կը հանեն։

(Մամուլ)

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԻՆՖԻԱՁԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ЖУРНАЛЪ
„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“
Издаваемый въ г. Тифлисѣ.
(Годъ второй)

Открыта полугодовая подписка на журналъ съ 1 іюля 1882 г. по 1 января 1882 года.

Цѣна за полъ года 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣсяца 3 р. 20 к. на 1 мѣсяцъ 1 р. 20 к. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не далѣе конца года.

Полугодовые подписчики могутъ вносить при подпискѣ 3 руб. и черезъ мѣсяцъ еще 3 руб.

Подписка принимается въ г. Тифлисѣ въ Администраціи журнала, Сололакская улица д. № 10 и въ Москвѣ и въ С. Петербуркѣ въ книжныхъ магазинахъ И. И. Анисимова.

2—2

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԳՐԿՈՑԿ
«ՍԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ»
ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ
ընթերցասէր մանուկների համար
ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
ԳՐԵՑ Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ
Վաճառվում է պ. Շահվերդեանի Հրատարակչական խանութում։ Գինն է 20 կոպ. օտար տեղերից դիմում են հետևեալ հասցէով. Тифлисъ, въ газетное Агентство В. Шавердова.

Նոր — Նախիջևանի ԹՕՖՏԻ ԳԻՒՂԻ ծխական Հոգևոր Հոգաբարձութիւնը ունի կարօտութիւն Հայոց լեզուի ՈՒՍՈՒՑԻՉ, որի պաշտօնատեղին է 400 ռուբլի բացի պատարաստի բնակարանից, ծառայից և վառելիքից. ուստի ցանկացողները այս պաշտօնին կարող են իրանց վկայաթուղթերով դիմել առ տեսուչն ծխական Հոգևոր գպրոցաց Նոր-Նախիջևանի և դիւղօրէից Նորին։

Տեսուչ Մխիթար Ք. Փախալեան։

7—10

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ անպամկութեան ՏՈՄՍԱԿ ցանկացողները կարող են ստանալ ուսուցչական ժողովի գրասենեակում, որ գտնվում է պ. Արծրունու գալերէյում, № 170.

3—3

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 5-го Августа 1882 г.

Տպարան Մ. Ռօտինեանց և ընկ.